

ՄԵՐ ԽՕՍՔԸ

2021-2022 տարեշրջանին, Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միութեան Գանատայի Շրջանային վարչությունը, պատանիներուն մօտ հայերէն լեզունով գրելու ձիրքը քաջալերելու նպատակով, կազմակերպած էր շարադրական մրցոյթ մը, որուն նիւթն էր «Իմ հերոսս»: Ուրախ ենք յայտնելու, թէ Ը. կարգի պատանիներ՝ Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանէն և ՀԲԸՄ Ալէք Մանուկեան վարժարանէն, Թորոնթոյի ՀՕՄ-ի Լափոյեան երկրորդական վարժարանէն, ինչպէս նաեւ Է. կարգի պատանիներ Թորոնթոյի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Շաբաթօրեայ վարժարանէն մեծ խանդավառութեամբ իրենց մասնակցութիւնը բերած էին սոյն մրցոյթին:

Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնենք վերոյիշեալ իւրաքանչիւր վարժարանի տնօրէնութեան և հայերէնի շատ սիրելի ուսուցիչ-ուսուցչուհիներուն, նաեւ յատուկ շնորհակալութիւն մասնակցող աշակերտ-աշակերտուհիներուն ու անոնց ծնողներուն: Մեր շնորհակալական խօսքերը կ'ուղղենք այս շարադրական մրցոյթի դատական կազմին՝ Նանոր-Աշնա Մնասպեանին, Մեղեդի Էթիմեզեանին և Նազիկ Հանէշեանին: Նաեւ շնորհակալութիւն Շողիկ Ազարիկեանին, որ սիրայօժար կատարեց անհրաժեշտ սրբագրութիւնները, փորձելով կարելի եղած չափով պահել գրութիւններուն հարազատութիւնը:

Հորիզոն Մանկապատանեկանի այս թիւով կը հրապարակենք լաւագոյն շարադրութիւնները և պատրաստ ենք յաջորդ թիւերուն մէջ ներառել այլ հետաքրքրական շարադրութիւններ՝ նոյն թէ տարբեր թեմաներով: Բարի աշխատանք և բարի ընթերցում բոլորին:

Բուժիչ ուժով հերոսս



Իմ հերոսս մէկ կոճակով կրնայ ժողովուրդը ուրախացնել կամ հանգչեցնել: Ան կօզնէ, որ զուարճանանք հարսանիքներու ատեն: Զայն հաճոյքով մտիկ կընենք ինքնաշարժներու և թատերասրահներու մէջ: Մենք կը նուագենք ու մեր գեղեցիկ ձայնով կ'երգենք: Իմ հերոսս երաժշտութիւնն է:

Ժամանակին, երբ երեխայ էի, երաժշտութիւն ու երգ մտիկ կընէի, որ քունի անցնէի, ու մայրս հանգչէր: Այսօր երաժշտութիւնը բազմաթիւ օգուտներ ունի ինձի համար, որոնց շնորհիւ ան դարձած է իմ հերոսս: Օրինակ, երբ դասերս կը սորվիմ, երաժշտութիւն մտիկ կընեմ, որ կեդրոնացած մասմ եւ արագ ամբողջացնեմ պարտականութիւններս: Հայերէն երգեր մտիկ ընելով ինքզինքս քաջ կը զգամ, սիրով կը լեցուիմ եւ աւելի կամրանայ կապս մեր մշակոյթին հետ: Տխուր երգեր մտիկ ընելով կը յուզուիմ: Այս օրինակները ցոյց կու տան, որ երաժշտութիւնը կրնայ զգացումներդ քանի մը վայրկեանէն փոխել, ինչ որ առաւելագոյնը կը յուզէ զիս:

Երաժշտութիւնը կրնայ մարդկութեան յոյս տալ, երբ կեանքը վիշտով լեցուն է: Օրինակ, Հայաստանի պատերազմներուն ժամանակ, զանազան երգիչներ երգեր հեղինակեցին, որպէսզի հայերուն հաւատք եւ յոյս ներշնչեն: Երաժշտութիւնը կրնայ նաեւ ժողովուրդը համախմբել եւ այդ սիրով լեցուն կապին շնորհիւ ժողովուրդը կրնայ շատ աւելի ուժեղ ու քաջ դառնալ:

Մարդ միշտ կուզէ ունենալ իր հերոսին թանկագին յատկանիշները: Ես կուզեմ ունենալ անոր բուժիչ ուժը: Երաժշտութիւնը կրնայ ժողովուրդին օգնել դժուար պահերու ընթացքին: Այդ ուժը ունենալը բախտաւորութիւն է եւ հարկաւոր է ճիշդ գործածել զայն:

Եզրափակելու համար ըսեմ, որ երաժշտութիւնը իմ հերոսս է, առանց անոր կեանքը սեւ ու ճերմակ կըլլար: Ան իր ուժով կրնայ ազգերու միջեւ կապը եւ սէրը զօրացնել եւ մեզ ուրախացնել: Յուսանք, որ երաժշտութիւնը, յատկապէս հայկականը, կապրի դարէ դար:

Ալիք Թուրիկեան
Սուրբ Յակոբ Ազգային վարժարան



Անձնուէր գորավարը

Իմ հերոսս գորավար Վարդան Մամիկոնեանն է: Ես իր մասին շատ կարդացած եմ եւ այս շարադրութեան մէջ իր իւրայատուկ գիծերուն եւ իր հերոսական նկարագրին մասին պիտի գրեմ:

Վարդան Մամիկոնեան իր քաջութեամբ, իր խելացիութեամբ եւ իր առիծի սրտով Հայաստանի վահանը եղած է: Ան իր հաւատքը եւ իր հայրենիքը ամէն բանէ վեր դասած է, չէ դաւաճանած իր ժողովուրդին եւ անոնց, որոնք իրեն կը վստահէին: Իր այս յատկանիշներով կրցած է ապահովել եւ գորացնել հայրենիքը: Դժուար ժամանակներու մէջ ան միշտ ձեռք գտած է ստեղծուած հարցերը լուծելու: Իր քաջութեամբ ան թոյլ չէ տուած, որ պարսիկները կրօնափոխ ընեն հայերը եւ իր հայրենասիրութեամբ կրցած է պաշտպանել ամբողջ ազգին մշակոյթը: Ահա այս պատճառով ես զինք կը մեծարեմ:

Վարդան Մամիկոնեան հերոս մըն է ամբողջ Հայաստանին ու հայ ազգին համար, որովհետեւ ան կրցաւ պարսկական բանակին դէմ դնել, երբ իր բանակը շատ անելի փոքր էր:

Ան գոհուեցաւ Աւարայրի ճակատամարտին ընթացքին իր բոլոր համախոհներուն հետ եւ փրկեց հայ ազգի հաւատքը: Այսօր մենք հպարտ ենք, որ շնորհիւ Քաջ Վարդանին ունինք մեր լեզուն, մեր հաւատքը, մեր հարուստ պատմութիւնն ու մշակոյթը:

Իր բոլոր յատկանիշներէն ես կուզի ունենալ իր անսահման քաջութիւնը, հայրենիքը պահելու եւ կառավարելու իր ուժն ու կորովը:

Վարդան Մամիկոնեանի եւ իր նման հայրենասէր հայորդիներու շնորհիւ է, որ մենք մինչեւ այսօր կ'ապրինք, կը գործենք եւ պիտի շարունակենք գոյատեւել դարէ դար:

Յարգանք քեզ, հերո՛ւ գորավար:

Անթոնի Մագաճեան
Սուրբ Յակոբ Ազգային վարժարան



Իմ աննման հերոսներս

Այս մուրակին վրայ իմ սիրելի հերոսներս մայրս եւ հայրս են, որովհետեւ իրենք զիս կը պաշտպանեն ծնած օրէս ի վեր: Գրելէս առաջ, երբ կը մտածէի, թէ որո՞ւ մասին պիտի գրեմ, չէի կրնար որոշել մա յրս թէ հայրս է իմ հերոսս, որովհետեւ ես զիրենք հաւասարապէս կը սիրեմ: Անոնք կը գուրգուրան իմ վրաս եւ ջանք չեն խնայեր, որ ես ըլլամ առողջ ու երջանիկ:


Մայրս սեւ մազեր ունի, կանաչ աչքեր, քնքոյշ է եւ ժպտերես, իսկ հայրս հասակաւոր է, հսկայ, գեղեցիկ սրճագոյն աչքերով եւ նոյնպէս ժպտուն: Թէեւ տարիքի բերումով հօրս մազերը քիչ մը թափած են ու ճերմկած, սակայն անոնք ձիւնի փաթիլներու պէս փափուկ են:

Մայրս աշխոյժ է, իսանդավառ, ճկուն եւ առիծի պէս զիս կը պաշտպանէ, իսկ հայրս կատակասէր է, հանդարտ, աշխատասէր եւ մօրս պէս քաջ ու անվախ:

Ծնողներս իմ հերոսներս են, որովհետեւ երբ ընկերներուս հետ որեւէ տեսակի հարց ունենամ, անոնք կը լսեն զիս եւ խրատներ կու տան, որպէսզի ճիշդ ձեւով լուծուիմ գտնեմ, ինչպէս նաեւ կ'օգնեն, երբ դասերս լաւ չեմ հասկցած դպրոցին մէջ: Մայրս գործունէայ անձնաւորութիւն մըն է: Ան բացի իր տնային պարտականութիւններէն Շաբաթօրեայ վարժարանի տնօրէնուհին է, ՀՍՀՄ-ի վարչութեան անդամ եւ Սուրբ Յակոբ վարժարանէն ներս հայերէնի ուսուցչուհի է: Իսկ հայրս, երբ ակնաբուժական գործը կը վերջացնէ, տուն կը վերադառնայ, հետո ժամանակ կ'անցընէ եւ զիս կը խնդացնէ իր հաճելի կատակներով:

Եզրափակելով գրութիւնս ըսեմ, որ կ'ուզեմ ըլլալ աշխատասէր եւ խելամիտ անձ մը հօրս եւ մօրս պէս: Նաեւ կ'ուզեմ իրենց պէս յաջողիլ դասերուս մէջ, որպէսզի ապագային կարենամ հպարտութիւն պատճառել ծնողներուս եւ շրջապատիս:

Լիլիթ Ադամեան
Սուրբ Յակոբ Ազգային վարժարան



Իմ հերոսս՝ Պարոյր Սեակ

Իմ հերոսս բոլորին կողմէ սիրուած հայ մեծ բանաստեղծ Պարոյր Սեակն է: Պարոյր Սեակին բուն անունը Պարոյր Ռաֆայէլի Ղազարեանն է: Ան սեւ մազերով եւ սեւ աչքերով էր: Ինքնիրեն համար կըսէր, թէ ուղղակի տգեղ արտաքինով մէկն էր, բայց շատեր զինք կը սիրէին: Հիացած եմ իրմով եւ իր գրած գործերով: Բանաստեղծութիւնները կարդալով իմ մէջս հայրենասիրական զգացումներ կարթնանան:

Շատ հպարտ զգացի, երբ մօրս հետ այցելեցի Արարատի շրջանի Չանախչի գիւղը, Պարոյր Սեակի տուն թանգարանը: Հոն, պատերուն վրայ տեսանք բանաստեղծին նկարները իր ընտանիքին հետ, յիշատակները, գրասեղանը, գրամեքենան եւ այլն:

Երբ իր թանգարանին մէջ կը շրջէիք, մամաս ինծի կը կարդար իր գրած բանաստեղծութիւնները, հոն զգացի իր մեծութիւնը, եւ այն ատեն էր, որ դարձաւ իմ հերոսս:

Պարոյր Սեակ մեր ժողովուրդին ձայնն է: Ան գրած է մեր երազանքներուն եւ զգացումներուն մասին: Ունի շատ գեղեցիկ հայրենասիրական եւ սիրային բանաստեղծութիւններ, որոնք իմ կարծիքով, անկրկնելի եւ իւրայատուկ են: Պարոյր Սեակի շնորհիւ սորված եմ նոր բառեր եւ շատ գեղեցիկ արտայայտութեան ձեւեր: Ան կը ներշնչէ զիս, որ անելի հայերէն խօսիմ, կարդամ եւ ջանք թափեմ, որ կրցածիս չափի հայ մասն: Կը յուսամ, որ օր մը կրնամ իրեն պէս արտայայտուիլ եւ իրեն նման գեղեցիկ կերպով օգտագործել բառերս:

Ես ընդհանրապէս բոլոր հայ բանաստեղծներով եւ գրողներով կը հիանամ եւ կը հետաքրքրուիմ, բայց Պարոյր Սեակը աննման է: Իր գործերը անկրկնելի եւ շատ ազդեցիկ են: Համոզուած եմ, որ ան ինծի, բոլոր հայերուս եւ ընդհանրապէս ամբողջ մարդկութեան համար լաւ օրինակ է: Ան անբացատրելի զգացումներ կարթնցնէ մէջս, եւ հաստատօրէն ու հպարտութեամբ կըսեմ, որ հերոսս է:

Կասիա Նորա Այնթապեան
Սուրբ Յակոբ Ազգային վարժարան

Ներշնչող հերոս



Իմ հերոսս աննման ու միակ մայրս է: Ան միջահասակ է: Իր նշաձեռն աչքերը գոց սրճագոյն տուրմի ովկիանոսի մը նման կը փայլին արեւուն լոյսին տակ ու երբեմն անոնք կը ծածկուին իր մազերով: Մայրս ինձի նման գանգուր մազեր չունի, ընդհակառակը, անոր մազերը ուղիղ են: Մօրս քիթը ոչ մեծ է, ոչ ալ պզտիկ, անոր չափը կատարեալ է, իսկ շրթունքները բարակ ու բաց վարդագոյն են:

Մայրս կրնամ բազմաթիւ ածականներով նկարագրել, օրինակ՝ ազնիւ, բարեսիրտ, գուրգուրոտ, պաշտպանող, արդար, ուշիմ, անձնուէր եւ անկեղծ: Երբ իր կարիքը զգամ, ան միշտ կողքիս է. օրինակ, երբ թուաբանութեան քննութեան արդիւնքները ստացայ, տեսայ, որ ձախող նիշ մը ունեցած եմ եւ որոշեցի մօրս չյայտնել այս մասին: Յաջորդ օրը մայրս ինձի մօտեցաւ ու արդիւնքներս ուզեց տեսնել: Ես պիտի ըսէի, թէ տակաւին չեմ ստացած, բայց ան զիս ընդմիջելով ըսաւ. «Դպրոցէդ նամակ մը ստացայ, ուր կըսուի, թէ երէկուրն արդիւնքներդ ստացած ես: Ո՛ր է քննութեան թուղթը»: Այս խօսքէն

վերջ ուրիշ ընտրութիւն չունէի: Իրեն ցոյց տուի նիշս, կը սպասէի, որ պիտի ջղայնանայ, բայց ան հանդարտօրէն հարցուց. «Ո՛ր հարցումներուն դժուարութիւն ունեցար»: Ես զարմացայ ու բացատրեցի իմ դժուարութիւններս: Իմ վիճակս հասկնալուն համար ես երախտապարտ եմ իմ հերոսիս:

Մայրս նաեւ ինձի լաւ խրատներ կու տայ: Ես անոնց հետեւելով բաւական յաջողած եմ կեանքիս մէջ: Առանց իրեն չեմ կրնար երեւակայել, թէ ո՛ր կըլլայի այժմ: Մայրս կը յորդորէ զիս, որ երազանքներուս հետեւիմ, ուրիշներուն օգտակար ըլլամ, եսասեր անձ մը չըլլամ եւ այլն: Իմ հերոսս ինձի կը սորվեցնէ նաեւ ներողամիտ եւ քաղաքավար ըլլալ:

Եզրափակելով այս գրութիւնս, կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել իմ սիրելի հերոսիս՝ ինձի ներշնչման աղբիւր հանդիսանալուն համար: Երախտապարտ եմ նաեւ միշտ քովս ըլլալուն համար: Կը յուսամ, որ մայրս երկար, առողջ ու երջանիկ տարիներ կապրի: Իսկ ես պիտի շարունակեմ իրեն պէս բարիք գործել ամէն օր:

Ալիք Մումճեան
Սուրբ Յակոբ Ազգային վարժարան

Իմ հերոսս

Իւրաքանչիւր մարդ ունի իր երազանքի հերոսը: Իմ հերոսս հայ զինուորն է: Քաջ եւ արի հերոսը, որուն համար չկայ աւելի բարձր ու սրբազան պարտականութիւն, քան հայրենիքի պաշտպանութիւնը: Հպարտ եւ պաշտպանուած կը զգամ, երբ գիտեմ, որ հայոց սահմանը ապահով է եւ կը հսկուի արի ու խելացի հայ զինուորին կողմէ:

Հօրս ու անպարտ է մեր հայ զինուորը, քանի որ հայ զինուորին երակներուն մէջ ազատատենչ Հայկի ու անոր ժառանգորդներուն արիւնը կը հոսի:

Դարերու ընթացքին հայը ծնած է այնպիսի հերոս զաւակներ, որոնք միշտ գերադասեր են զոհել իրենց կեանքը, քան տեսնել մեր սուրբ հողը թշնամիի ոտքերուն տակ, որպէսզի միշտ ապրի մեր պատիւն ու արժանապատուութիւնը:

Իւրաքանչիւր հայ պարտաւոր է իր հայրենասիրութիւնը ապացուցել. զինուորը՝ զենքով, հողագործը՝ աշխատելով, շինարարը՝ կառուցելով, իսկ մենք՝ դպրոցականներս, հայերէն լեզուն կատարեալ սորվելով, հայու վայել ապրելով ու գործելով:

Կ'ուզեմ իմ երախտագիտութիւնս յայտնել հայ զինուորին՝ իր սուրբ գործին համար, որ գիտակցութեամբ մահով իր կեանքը կը զոհէ յանուն մեր սուրբ հողին: Փա՛ռք մեր հայոց զինուորին. մենք պիտի ըլլանք ձեր հետերդները ու պիտի շարունակենք ձեր կերտած յաղթական ճամբան:

Կ'ուզեմ աւարտել Գարեգին Նժդեհի հետեւեալ խօսքերով.
«Յաղթում է այն կողմը, որը վստահ է ո՛չ թէ իր սպառազէն բռունցքի, այլ՝ իր ներազէն ոգու գերազանցութեան: Երկաթէ զենքերի դէմ հեշտ է վահան գտնել, բայց ոչ նաեւ ոգու զենքերի դէմ, որ քո՛նր պիտի լինի, հա՛յ զօրական»:

Արա Առաքելեան
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Շաբաթօրեայ վարժարան



Ներշնչման աղբիւր



Հերոսը այն իտեալական մարդն է, որմէ կը փորձենք օրինակ առնել եւ հետեւիլ անոր ճանապարհին: Կը կարծեմ, որ պատանիի մը համար իր վարիչը թանկ է եւ կարեւոր: Անոնք են, որ կօզնեն մեզի հայօրէն մեծնալու եւ պայքարելու ազգին գոյատեւման համար: Անոնց ջանքերով կը ձեւաւորուի ապագայ մարդուժը: Անոնցմէ է, որ օրինակ կ'առնեն, դառնալու ապագայ ղեկավար մը: Վարիչներս միշտ եղած են իմ հերոսներս:

Անոնք միշտ պատրաստ են ամէն գնով բոլոր պատանիներուն կողքին կանգնելու դժուարութեան պահուն: Անկասկած գիտեմ, որ անոնք պատրաստ են մեզի օգնելու որեւէ ժամանակ: Իւրաքանչիւր վարիչ իր դրոշմը կը դնէ պատանիներուն նկարագրին վրայ: Անոնք կը մարմնաւորեն բոլոր այն յատկութիւնները, որոնք վայել են դաշնակցական անձի մը: Օրինակ՝ գոհաբերութիւնը, ղեկավարելու կարողութիւնը, ընկերասիրութիւնը եւ այլն: Ահաւասիկ բոլոր այն պատճառները, որոնց շնորհիւ վարիչներս դարձած են իմ հերոսներս:

Երբ առաջին անգամ մասնակցեցայ պատանեկան հերթական ժողովի մը, վարիչներս զիս ոգեշնչեցին հայրենասիրութեամբ, որ խարսխուեցաւ մէջս: Ճիշդ այդ պահուն էր, որ գիտցայ, թէ մինակ չեմ, թէ թիկունքիս կանգնած են ինծի չափ ազգս ու հայրենիքս սիրող գաղափարի ընկերներ եւ ընկերուհիներ, եւ բոլորս միասին պիտի պայքարինք խաղաղ եւ միացեալ Հայաստանի մը համար: Մեր վարիչները մեզի կը սորվեցնեն հայրենասէր մարդոց արժանիքները, օրինակ բերելով տարբեր դէմքեր: Այս գաղափարները մեզի օգտակար կըլլան ոչ միայն ակումբէն ներս, այլ նաեւ ամէնօրեայ կեանքի մէջ: Վարիչներս միշտ լաւ ազդեցութիւն ունեցած են վրաս իրենց տուած դասախօսութիւններով, որոնց ընթացքին խօսած են խիզախ հայ հերոսներու մասին, ինչպիսին են Մարօն եւ Կարօն, որոնք հայրենիքի սիրոյն գոհուեցան:

Եզրափակելու համար կուզեմ յիշեցնել իմ վարիչներուս կատարած ծանր աշխատանքը՝ մեզի տարբեր տեսակի թեմաներով դաստիարակելու համար: Իրենց շնորհիւ հարստացած եմ ազգային եւ միութենական կեանքի վերաբերեալ գիտելիքներով: Միշտ պիտի սիրեմ եւ յարգեմ իմ օրինակելի վարիչներս:

Առլի Քելլէան

Սուրբ Յակոբ Ազգային վարժարան

Իմ հերոսս

Իւրաքանչիւր անձ կ'ունենայ իր հերոսը, ըլլալ ան իր ծնողներէն կամ հարազատներէն մէկը, եւ կամ արուեստի կամ մարզական աստղ մը: Մակայն ես, որպէս հայ պատանի, որ կը յաճախեմ ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարան, նաեւ անդամ եմ ՀՄԸՄ-ի եւ Պատանեկան շարքերուն, օրական մտիկ կ'ընեմ հայրենիքի լուրերը եւ կը զգամ հայ ժողովուրդը տանջող մտահոգութիւնները: Անցեալ տարուան Արցախեան 44-օրեայ ահռելի պատերազմէն ետք, իմ հերոսս դարձաւ ազատամարտիկ Գէորգ Հաճեանը:



Գէորգ զաւակն է մուսալեռցի, այնճարցի հայ ընտանիքի մը: Ան 2005 թուականին հաստատուած էր Հայաստան իր կնոջ եւ իր մէկ հատիկ տղուն հետ: Մակայն երբ Արցախեան պատերազմը սկսաւ Սեպտեմբեր 2020-ին, ան թողելով իր կիներն ու որդիներն, Լիբանան ապրող իր ծերունի մայրն ու երիտասարդ քոյրերը, մեկնեցաւ կռուի դաշտ, միացաւ իր գաղափարի ընկերներուն, ունեցաւ մէկ նպատակ՝ զոհուիլ վասն հայրենիքի ու հայութեան, եւ այդպէս ալ եղաւ:

Ես բախտն ունեցած եմ զինք անձամբ տեսնելու, երբ ան այցելած էր Թորոնթօ, ՀՕՄ-ի վարժարանը: Լսած էի եւ տպաւորուած իր հրաշալի ձայնով. ըլլան անոնք կրօնական շարականներ, թէ ազգագրական երգեր, որոնք լի էին հարազատ եւ ազգային ապրումներով, ոգիով եւ շունչով:

Գէորգ Հաճեան օրինակն է հայրենասէր հայու, որ չինայեց նոյնիսկ իր կեանքը՝ ազատելու եւ պաշտպանելու համար իր հայրենի հողը:

Փառք ու պատիւ քեզի՝ Գէորգ, դուն հայ պատանիներու սրտերուն, հոգիներուն ու միտքերուն մէջ միշտ պիտի մնաս: Պիտի հետեւինք քու քայլերուդ, պիտի չդադրինք պայքարելէ ու պահանջելէ: Խունկ ու մոմ քու եւ քեզի նման նահատակներու շիրիմին ու հոգիին:

Անի Հրեշտակեան

ՀՕՄ-ի Լափոյեան Երկրորդական վարժարան



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757

Email: sylvia@horizonweekly.ca

Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի

Ձեռայղացք՝ Լորի Իսաչերեանի